# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոտայքի մարզի Վերին Պտղնի գյուղական համայնքի հաշվետու
համայնքային ժողովի

30 օգոստոսի 2012թ. գ. Վերին Պտղնի

2012 թվականի օգոստոսի 30-ին տեղի է ունեցել Վերին Պտղնի համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

*Մասնակցությամբ՝*
համայնքի ավագանու անդամներ

1. Արսեն Առաքելյան
2. Գենադի Բաղդասարյան
3. Յուրիկ Գասպարյան
4. Կարեն Մովսիսյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Յուրի Գևորգյան
2. Արման Զուրաբյան
3. Զեմմա Աբգարյան
4. Նարինե Ճառոյան
5. Մաի Հակոբյան
6. Լիաննա Մանվելյան
7. Զեմմա Գրիգորյան
8. Արթուր Գրիգորյան
9. Սահակ Գասպարյան

Համայնքի բնակիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարած աշխատանքների հանրային իրազեկման մասին:

զեկուցող՝ համայնքի ղեկավար Գ. Պողոսյան

ԼՍԵՑԻՆ.

Հարգելի աշխատակազմի աշխատակիցներ և Վերին Պտղնի համայնքի բնակիչներ.

2011 և 2012 թվականի տասն ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

* 2010 թվականի դեկտեմբերի 24 -ին ավագանու թիվ 66-Ն որոշմամբ հաստատվել է 2011 թվականի բյուջեն՝ ըստ որի եկամուտները կազմել են 25 295 400 ՀՀ դրամ, բյուջեի եկամուտները կատարվել են 100,07 % ով:

* 2011 թվականի դեկտեմբերի 16-ին համայնքի ավագանու թիվ N 59-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի 2012 թվականի բյուջեն՝ ըստ որի եկամուտները կազմել են

23 732 300 ՀՀ դրամ, մինչդեռ բյուջեի եկամուտները 8 ամսվա դրությամբ՝ ներառյալ չնախատեսված եկամուտներ հողի օտարումից՝ կատարվել է 116,64 % -ով:

* 2012 թվականին կատարվել է ներհամայնքային ճանապարհների շինարարություն, որի իրականացման համար ծախսվել է 20 573 442 ՀՀ դրամ,

* Փողոցային լուսավորության նյութեր և պարագաներ ձեռք բերելու համար ծախսվել է 186 920 ՀՀ դրամ:

* Համայնքի փողոցներում երկաթյա նստարաններ, ծաղկամաններ և աղբամաններ տեղադրելու համար տրամադրվել է 671 500 ՀՀ դրամ :

* Համայնքում կատարվել է աղբահանություն, որի համար ծախսվել է 740 200 ՀՀ դրամ:

* Համայնքի անապահով ընտանիքներից թվով 4 ուսանողների փոխանցվել է 330 000 ՀՀ դրամ որպես ուսման վարձ:

* Համանքի սոցիալապես անապահով թվով 15 ընտանիքների տրվել է 735 000 ՀՀ դրամ սոց. օգնություն:

* Համայնքի բուժարանին տրամադրվել է դրամաշնորհ՝ դեղորայք ձեռք բերելու համար 90 000 ՀՀ դրամի չափով:

* Նոր Տարվա հետ կապված միջոցառումների շրջանակներում՝ Երեխաներին տոնական տոպրակներ տրամադրելու նկատառումով հատկացվել է 100 000 ՀՀ դրամ

* Մարտի 8-ի կապակցությամբ տրվել ֆինանսական օգնություն՝ գյուղապետարանի կին աշխատակցուհիներին 100 000 ՀՀ դրամի չափով:

* Վերջին զանգի հետ կապված միջոցառումների շրջանակներում՝ համայնքի թվով 9 շրջանավարտների տրամադրվել է 100 000 ՀՀ դրամ գումար :

* 2012 թվականի ընթացքում իրականացվել է անվճար իրավաբանական խորհրդատվություն համայնքի բնակիչների համար:

* Տարվա կտրվածքով նախատեսված են հետևյալ աշխատանքների իրականացում՝ ինչպիսիք են համայնքում մանկապարտեզի, բուժարանի վարչական շենքերի կառուցում, ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում շուրջ 53 000 000 ՀՀ դրամի շրջանակներում:

* Բարեգործական հիմունքներով համայնքում իրականացվել են նաև ոռոգման ջրագծի նորոգման և փողոցային լուսավորության կարգավորման աշխատանքներ 1 000 000 ՀՀ դրամի չափով:

ՈՐՈՇՎԵՑ

1. Հաշվետվությունն ընդունել ի գիտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ